ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24.07.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 588-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐՏԻՆ ՇԱԼՈՒՆՑԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4 կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 229-Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Մարտին Շալունցի (ՀՎՀՀ 77919589) հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Բավարարել անհատ ձեռնարկատեր Մարտին Շալունցի կողմից 2025 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի «Ցուրտ աղբյուր» անվանյալ տարածքում գտնվող բենզալցակայանում հեղուկ վառելիքի վաճառք իրականացնելու համար տալ թույլտվություն:

2. Հանձնարարարել աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն սահմանված տուրքը վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 24
ք. Գորիս